**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՎԻՎ/360/2024**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 11 նոյեմբերի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող) Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի նոյեմբերի 11-ին քննելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) հաշվետու ժամանակահատվածում պաշտոնատար անձ (այսուհետ՝ Պաշտոնատար անձ)՝ Արուսյակ Մանավազյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/360/2024 գործը՝

## Պ Ա Ր Զ Ե Ց

### I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետով սահմանված Հանձնաժողովի լիազորությունների շրջանակներում, նույն օրենքի 40.1-ին հոդվածով սահմանված կարգով իրականացնելով

նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով վերապահված գործառույթը և հիմք ընդունելով Կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Տարեկան հաշվետվություն) ստուգման և աուդիտի արդյունքում վերհանված տվյալները, պարզել է, որ 2023 թվականի ընթացքում Կուսակցության Պաշտոնատար անձ Արուսյակ Մանավազյանի կողմից չի պահպանվել «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 23-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ Կուսակցության բոլոր դրամական վճարումներն անկանխիկ հաշվարկներով կատարելու պահանջը:

1.2 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հունիսի 10-ին Կուսակցությանն է ուղղվել թիվ 01/1850-2024 գրությունը, որով Հանձնաժողովը խնդրել է Կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգման նպատակով հնգօրյա ժամկետում Հանձնաժողովի պաշտոնական՝ info@cpcarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով, առձեռն կամ փոստային առաքմամբ ներկայացնել Կուսակցության՝ 2023 հաշվետու տարվա բոլոր բանկային հաշիվների (բացառությամբ նախընտրական հիմնադրամների) վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում՝ բանկի կողմից վավերացված բանկային հաշիվների մուտքերի և ելքերի վերաբերյալ քաղվածքները (առկայության դեպքում նաև դրանց էլեկտրոնային տարբերակները), Կուսակցությանն անդամավճարներ վճարած անձանց՝ Կուսակցության անդամ հանդիսանալու, ինչպես նաև Կուսակցությանը անդամավճար վճարելու չափին, կարգին և ժամկետներին վերաբերող և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

Ի լրումն վերոգրյալի՝ Հանձնաժողովը նշված գրությամբ խնդրել է Կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության աուդիտորական եզրակացությամբ, ինչպես նաև «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթով հայտնաբերված անհամապատասխանությունների և խախտումների հետ անհամաձայնության դեպքում ներկայացնել դրանց վերաբերյալ Կուսակցության դիրքորոշումն արտահայտող լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր:

Հանձնաժողովը նշված գրությամբ միաժամանակ հայտնել է Օրենսգրքի 189.14-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության մասին՝ Հանձնաժողովին

սահմանված ժամկետում անհրաժեշտ տեղեկությունները կամ պահանջվող նյութերը չտրամադրելու համար:

1.3 Ի պատասխան Հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 10-ի թիվ 01/1850-2024 գրության՝ 2024 թվականի հունիսի 17-ին Կուսակցության կողմից Հանձնաժողովի էլեկտրոնային փոստի հասցեին է ներկայացվել պահանջվող տեղեկատվությունը, այդ թվում նաև՝ 2023 հաշվետու տարվա կուսակցության բոլոր բանկային հաշիվների քաղվածքները:

1.4 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի սեպտեմբերի 23-ին Կուսակցությանն է ուղարկվել թիվ 01/2785-2024 գրությունը, որով Հանձնաժողովը խնդրել է տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել կանխիկացված գումարների օգտագործման վերաբերյալ տեղեկություններ՝ մասնավորապես ներկայացնել դրանց ծախսման ուղղություններն ու նպատակները՝ առկայության դեպքում կցելով նաև կատարված ծախսերը հավաստող փաստաթղթերը, ինչին ի պատասխան Հանձնաժողով է ներկայացվել Կուսակցության դիրքորոշումն այն մասին, որ իրականացված կանխիկացումների վերաբերյալ փաստաթղթեր չեն պահպանվել:

1.5 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի օգոստոսի 12-ին Կուսակցությանն է ուղարկվել թիվ 01/2529/5-2024 գրությունը, որով Հանձնաժողովը խնդրել է տրամադրել 2023 թվականի հաշվետու տարվա ընթացքում Կուսակցության Պաշտոնատար անձի վերաբերյալ տեղեկատվություն, ինչին ի պատասխան՝ 2024 թվականի օգոստոսի 16-ին Հանձնաժողով են ներկայացվել տեղեկություններ առ այն, որ Կուսակցության Պաշտոնատար անձ է հանդիսանում Կուսակցության աշխատակազմի ղեկավար Արուսյակ Մանավազյանը:

1.6 Կուսակցության բանկային հաշիվների քաղվածքների տվյալների համաձայն՝ Կուսակցության քարտային հաշվից կատարված կանխիկացումները հաշվետու տարում կազմել են 42 000 (քառասուներկու հազար) ՀՀ դրամ:

1.7 Աուդիտորական եզրակացության բացասական կարծիքի հիմք հանդիսացող 2-րդ կետի համաձայն՝ «Կուսակցության քարտային հաշվից 2023թ. ընթացքում իրականացվել է ընդհանուր առմամբ 42 000 (քառասուներկու հազար) ՀՀ դրամի չափով

կանխիկացումներ, ինչը հակասում է «Կուսակցությունների մասին» Սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջին՝ համաձայն որի Կուսակցությունը բոլոր դրամական վճարումները կատարում է անկանխիկ հաշվարկներով»:

1.8 Վերոնշյալ իրավախախտման հայտնաբերմամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը 2024 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 01/3312-2024 գրությամբ Կուսակցության Պաշտոնատար անձ Արուսյակ Մանավազյանին ուղարկել է ծանուցում՝ Կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկներն անկանխիկ չկատարելու զանցանքի հատկանիշներով առերևույթ իրավախախտման վերաբերյալ՝ հրավիրելով վերջինիս Հանձնաժողով՝ 2024 թվականի նոյեմբերի 8-ին՝ ժամը 14:30-ին՝ մասնակցելու Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ նոյեմբերի 11-ին՝ ժամը 11:00-ին՝ մասնակցելու առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը: Արուսյակ Մանավազյանի կողմից նշված գրությունը ստացվել է 2024 թվականի նոյեմբերի 7-ին:

1.9 2024 թվականի նոյեմբերի 7-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-4807-2024 գրությամբ Արուսյակ Մանավազյանը խնդրել է գործի քննությունն իրականացնել իր բացակայությամբ:

1.10 2024 թվականի նոյեմբերի 8-ին պատշաճ ծանուցված Արուսյակ Մանավազյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/728/2024 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.11 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արուսյակ Մանավազյանի բացակայությամբ 2024 թվականի նոյեմբերի 11-ին՝ ժամը 11:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

## II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Սույն վարույթի շրջանակներում վարույթի մասնակցի կողմից դիրքորոշում և պարզաբանումներ չեն ներկայացվել:

## III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/360/2024 գործում առկա նյութերը, Կուսակցության Տարեկան հաշվետվությամբ ներկայացված տվյալները՝ համադրելով դրանք Կուսակցության բանկային հաշիվների քաղվածքների հետ և հաշվի առնելով Աուդիտորական եզրակացությամբ հայտնաբերված առերևույթ խախտումները՝ կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 2023 թվականի ընթացքում Կուսակցության Պաշտոնատար անձ Արուսյակ Մանավազյանի կողմից չի պահպանվել Սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ Կուսակցության բոլոր դրամական վճարումներն անկանխիկ հաշվարկներով կատարելու պահանջը, այն է՝ 2023 թվականի ընթացքում Կուսակցության քարտային հաշվից իրականացվել են ընդհանուր 42,000 (քառասուներկու հազար) ՀՀ դրամի չափով կանխիկացումներ:

3.2 «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նախագահի 2022 թվականի նոյեմբերի 30-ի N-1 որոշմամբ Արուսյակ Մանավազյանը նշանակվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության աշխատակազմի ղեկավար: 2023 թվականի հաշվետու ժամանակահատվածում Արուսյակ Մանավազյանը հանդիսացել է Կուսակցության Պաշտոնատար անձը:

3.3 «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նախագահի 2022 թվականի նոյեմբերի 30-ի N-1-1 որոշման «ե» կետի համաձայն՝ Կուսակցության աշխատակազմի ղեկավարի ծառայողական պարտականություններից է՝ ապահովել անդամավճարների հավաքագրման, նվիրատվությունների կատարման՝ օրենքով սահմանված ընթացակարգերի պահպանումը, վերահսկել Կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի տարեկան հաշվետվությունների կազմումն ու պետական լիազոր մարմնին ներկայացումը:

## IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներն են՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների (այսուհետ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվություններ) ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգումը:

4.2 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը:

4.3 Սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվության ստուգումն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն օրենքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով:

**4.4** Սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ **կուսակցությունը բոլոր դրամական վճարումները կատարում է անկանխիկ հաշվարկներով:**

4.5 «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անկանխիկ ձևով գործառնություն (վճարում) է համարվում կանխիկ կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարումը, որն ուղղված է (փոխանցվում է) շահառուի (վճար ստացողի) բանկային հաշվին, կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարումը, որն ուղղված է (փոխանցվում է) շահառուի (վճար ստացողի)

էլեկտրոնային փողի հաշվին: Ընդ որում, անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում է համարվում նախաձեռնողի բանկային կամ էլեկտրոնային փողի հաշվից կատարված վճարումը (փոխանցումը):

4.6 Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկներն անկանխիկ չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

4.7 Օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենսգրքի 166.1-ին, 169.28-րդ, 169.31-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ, 189.16-րդ, 189.19-189.24-րդ, 206.14-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.11 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.12 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.13 Օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝

1) տվյալ գործի քննությունը վերաբերում է, արդյոք, իր իրավասությանը.

2) ճիշտ են կազմվել, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը.

3) գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են, արդյոք, դրա քննության ժամանակի և տեղի մասին.

4) պահանջվել են, արդյոք, անհրաժեշտ լրացուցիչ նյութեր.

5) վարչական պատասխանատվության ենթարկվող անձի, տուժողի, օրինական ներկայացուցիչների, փաստաբանի միջնորդությունների մասին:

4.14 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է

հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

**Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.**

Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովելու հաշվետու տարվա ընթացքում Կուսակցության ֆինանսական միջոցների և ծախսերի վերաբերյալ հանրային հաշվետվողականությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունն, ինչպես նաև ֆինանսական մուտքերի և ելքերի անկանխիկ եղանակով իրականացման միջոցով բարձրացնել Կուսակցության գործունեության ֆինանսական թափանցիկության մակարդակը:

Միաժամանակ, Սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի նպատակն է կուսակցության գործունեության ֆինանսական թափանցիկության մակարդակը բարձրացնելը, որն ամրագրված է ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի հունվարի 18-ի ՀՕ-1-Ն սահմանադրական օրենքի հիմնավորմամբ, ինչից հետևում է, որ Օրենսդիրը, նման կարգավորում ամրագրելով, նպատակ է ունեցել ապահովել կուսակցությունների կողմից իրականացվող ֆինանսական գործարքների թափանցիկությունը, հաշվետվողականությունը և վերահսկելի լինելը՝ նման կերպ փորձելով նպաստել ֆինանսական գործարքների պատշաճ կերպով փաստաթղթավորմանը, ինչն անհրաժեշտության դեպքում հնարավորություն կտա աուդիտի, ինչպես նաև լիազոր մարմնի կողմից համապատասխան ստուգում իրականացնելու դեպքում հավաստիանալ իրականացված գործարքների օրինականության հարցում:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք

տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանն այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ նշանակությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Այսպես, Օրենսդիրը Սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսել է, որ Կուսակցությունը բոլոր դրամական վճարումները կատարում է անկանխիկ հաշվարկներով: Միաժամանակ, Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանում է վարչական պատասխանատվություն (սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով՝ 100,000-200,000 ՀՀ դրամի չափով) Կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելու համար:

Հանձնաժողովն իր կողմից կայացված թիվ ՎԻՎ/267/2024 վարչական իրավախախտման վերաբերյալ գործով նվազ նշանակության է որակել այն դեպքը, երբ չթույլատրված նվիրատվության չափը (29.485 ՀՀ դրամ) չի գերազանցել Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտումների գործերով նշանակվող տուգանքի նվազագույն չափը (100,000-150,000 ՀՀ դրամ), ինչպես նաև մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրվա ավարտը կուսակցության կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ հաստատված 29,485 (քսանինը հազար չորս հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ՝ օրենքով սահմանված չթույլատրված նվիրատվությունը պետական բյուջե վերադարձնելու փաստը վկայող ապացույցը ներկայացվել է Հանձնաժողով, որի արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ վերոնշյալ հանգամանքների **համակցությամբ** պայմանավորված՝ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Հանձնաժողովը, կարևորելով հանրային շահի գերակայությունը, Օրենսգրքի 189.16-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության արդյունքներով էական է համարել նվիրատվության՝ նույն հոդվածով **սահմանված սանկցիայի նվազագույն չափը չգերազանցելու**, ինչպես նաև չթույլատրված նվիրատվությունը պետական բյուջե վերադարձված լինելու հանգամանքների համակցությունը: Ուստի, սույն դեպքում, Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավախախտման գործը վճռելու համար Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ սույն գործով արարքը նվազ նշանակություն որակելու հիմքերի առկայությանը՝ Օրենսգրքի 189.16-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման արդյունքներով կայացված Հանձնաժողովի որոշումների, հիմնավորումների և պատճառաբանությունների հաշվառմամբ, այսպես.

Օրենսդիրը Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 8.1-ին մասով նախատեսել է, որ նույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված նվիրատվությունների դեպքում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցելիս, ինչպես նաև եթե նվիրատվությունն ստացվել է 4-րդ մասով սահմանված չթույլատրված աղբյուրներից, ապա կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում,

նվիրատվությունը, նվիրատվությանը համարժեք դրամական գումարը կամ նվիրատվության սահմանված չափը գերազանցող դրամական գումարը փոխանցել պետական բյուջե կամ վերադարձնել նվիրատուին, հակառակ դեպքում՝ կարձանագրվի Կուսակցության կողմից Օրենսգրքի 189.16-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումները: Միաժամանակ, Օրենսգրքի 189.16-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումն արձանագրվելուց հետո կուսակցությունը օրենսդրորեն ապահովված է նշված իրավախախտման առնչությամբ վարքագիծն ուղղելու հնարավորությամբ, այն է՝ օրենսդրորեն սահմանված ժամկետներից ավելի ուշ ժամկետներում օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները նվիրատուին կամ պետական բյուջե վերադարձնելու իրավական հնարավորությամբ:

Այսպես, բոլոր այն դեպքերում, երբ իրավախախտումն դրսևորվում է Սահմանադրական օրենքով նախատեսված՝ դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելու արարքով, ապա ստեղծվում է մի իրավիճակ, որ օրենսդրական կարգավորումներով բացակայում է դրան հաջորդող որևէ գործողության կատարումը, որը կարող է գնահատվել որպես կուսակցության կողմից իր իրավախախտ վարքագծի ուղղում:

Այլ կերպ՝ Օրենսդրի կողմից սահմանված գործող իրավակարգավորումներով հնարավորություն է ընձեռնվում կուսակցություններին 189.16-րդ հոդվածով իրավախախտումը արձանագրվելուց հետո Սահմանադրական օրենքով նախատեսվող՝ սահմանված չափը գերազանցող նվիրատվությունների, ինչպես նաև չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում, նվիրատվությունը, նվիրատվությանը համարժեք դրամական գումարը կամ նվիրատվության սահմանված չափը գերազանցող դրամական գումարը, ինչպես նաև չթույլատրված նվիրատվությունները փոխանցել պետական բյուջե և (կամ) վերադարձնել նվիրատուին, դրանով իսկ ուղղելով իրենց իրավախախտ վարքագիծը, մինչդեռ Հանձնաժողովը գտնում է, որ դրամական վճարումների հաշվարկներն անկանխիկ կատարելու պարագայում սահմանափակվում է կուսակցությունների կողմից ինչ-որ կերպ վարքագիծը ուղղելու իրավական հնարավորությունը:

Հիմք ընդունելով վերոնշյալ հիմնավորումները, ինչպես նաև հաշվի առնելով Օրենսդրի կողմից հետապնդվող նպատակները՝ կուսակցությունների հանրային հաշվետվողականության, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության ապահովման առնչությամբ, Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավախախտման պարագայում այն նվազ նշանակություն որակելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքին, որը տվյալ պարագայում հանդիսանում է Սահմանադրական օրենքով նախատեսված՝ Կուսակցության կողմից Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրամական վճարումների հաշվարկներն անկանխիկ կատարելը 100.000 ՀՀ դրամի սահմանաչափը չգերազանցող գումարի չափով: Հանձնաժողովն արձանագրում է, որ վերոնշյալ էական հանգամանքի հաշվառմամբ, սույն դեպքում դրսևորված իրավախախտումը այնպիսի հանրային վտանգավորություն չի ներկայացնում, որի արդյունքում էական վնաս կպատճառվի դրամական վճարումների հաշվարկներն անկանխիկ կատարելու արգելք սահմանող պահանջները կանոնակարգող իրավահարաբերություններին և կխաթարվի կուսակցությունների կողմից իրականացվող ֆինանսական գործարքների թափանցիկության, հաշվետվողականության և վերահսկելի լինելը կանխարգելելու կամ բացառելու օրենսդրի իրավաչափ նպատակը:

Ամփոփելով ամբողջ վերոնշյալը, սույն գործով խախտման (արարքի) որակական կողմը գնահատելիս **Հանձնաժողովն էական է համարում այն հանգամանքը,** որ թեև Կուսակցության կողմից չի պահպանվել Սահմանադրական օրենքով նախատեսված դրամական վճարումների հաշվարկներն անկանխիկ կատարելու պահանջը**,** այնուամենայնիվ Կուսակցության կողմից ընդհանուր 42,000 (քառասուներկու հազար) ՀՀ դրամի չափով կատարված **կանխիկացումների չափը չի գերազանցում Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավախախտումների գործերով նշանակվող տուգանքի նվազագույն չափը (100,000 ՀՀ դրամ),** որպիսի պարագայում Հանձնաժողովը հաստատված է համարում, որ սույն գործով 42,000 ՀՀ դրամի չափով դրամական վճարումների հաշվարկներն անկանխիկ կատարելու արարքով, այն է՝

Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտմամբ, չի խաթարվել նշված նորմով Օրենսդրի կողմից հետապնդվող նպատակն ու նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը:

Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կուսակցության Պաշտոնատար անձ Արուսյակ Մանավազյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով թիվ ՎԻՎ/360/2024 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արուսյակ Մանավազյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ**

**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**